

**Ա Ր Չ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն թիվ 2**

2011թ. մարտի 15-ին կայացած Երևանի պետական համալսարանի աշխարհագրության և երկրաբանության  
ֆակուլտետի խորհրդի նիստի

**ՕՐԱԿԱՐԳՈՒՄ**

1. Մագիստրոսական թեզերի և բակալավրիատի ավարտական հաշվետվությունների կատարման  
ընթացքը ամփոփում:

*/Չեկ. ամբիոնի վարիչներ/*

2. Ուսումնական և արտադրական պրակտիկաների կազմակերպման և նախապատրաստման ընթացքը  
ամփոփում

*/Չեկ. Ա. Գրիգորյան/*

3. Ընթացիկ հարցեր:

1. **ԼՍԵՑԻՆ** - Ամբիոնների վարիչների զեկուցումը ամփոփում մագիստրոսական թեզերի և  
բակալավրիատի ավարտական հաշվետվությունների կատարման ընթացքի վերաբերյալ:

*Ելույթ ունեցան* երկրաֆիզիկայի, պատմական և ռեզիդուալ երկրաբանության,  
ջրաերկրաբանության և ճարտարագիտական երկրաբանության, սոցիալ-տնտեսական  
աշխարհագրության, ջրաօդերևութաբանության և ֆիզիկական աշխարհագրության,  
քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի վարիչները, նշելով, որ մագիստրոսական  
թեզերի և ավարտական հաշվետվությունների թեմաները բաշխված են ուսանողներին,  
նշանակված են ղեկավարներ, ամբիոններում կազմված է դասախոսների  
հերթապահության գրաֆիկ՝ ուսանողներին հանդիպելու համար: Չեկուցողները նշեցին, որ  
ընդհանուր առմամբ վերոհիշյալ աշխատանքները կատարվում են ուսանողների կողմից և  
նրանք ժամանակին կավարտեն և կպաշտպանեն իրենց մագիստրոսական թեզերը և  
ավարտական հաշվետվությունները:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Հանձնարարել ամբիոնի վարիչներին կազմակերպել ավարտական հաշվետվությունների և  
մագիստրոսական թեզերի նախնական պաշտպանություններ և ժամանակին ու անհրաժեշտ  
մակարդակով ներկայացնել պաշտպանության:

2. **ԼՍԵՑԻՆ** – Ա.Գրիգորյանի հաղորդումը ամփոփում ուսումնական և արտադրական պրակտիկաների  
կազմակերպման և նախապատրաստման ընթացքի վերաբերյալ: Չեկուցողը նշեց, որ  
արտադրական պրակտիկաները նախատեսված են անցկացնել արտադրական տարբեր  
հիմարկներում, կան նախապես պայմանավորվածություններ հանրապետության տարբեր  
գերատեսչությունների և կազմակերպությունների հետ: Ուսումնական պրակտիկաները 1-ին և  
2-րդ կուրսերում կանցկացվեն համալսարանի Բյուրականի և Մարմարիկի ուսումնական  
հանգրվաններում և ՀՀ տարբեր շրջաններում՝ ավտոբուսային տարբեր երթուղիներով:  
Ամբիոնների կողմից կազմված են ուսումնական պրակտիկաների ծրագրերը, որոնցում նշված  
են բոլոր պրակտիկաների երթուղիները և դրանց համապատասխան ղեկավարները:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – 1. Ընդունելի գիտություն Ա.Գրիգորյանի հաղորդումը:  
2. Հանձնարարել ամբիոնի վարիչներին և պրակտիկայի ղեկավարներին անխափան  
կազմակերպել ուսումնական և արտադրական պրակտիկաներ՝ գործող ծրագրերին  
համապատասխան:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ.Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ  
  
ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա.Ս.ՍԱՐԴԱՐՅԱՆ